Ծահոյթի պլանավորում	Ծահոյթի նրկարատն պլանավորում	Ռազմավարական

Ուղամավարական մակարդակի համակարգերը օգնում են ընկերությանը նրկարատու ննդրության քաղաքականության նախակննիքին հասնելու համար և իրականացնում են ֆիրմայի ֆինանսական վիճակի կանխատեսաւմներ: Կառավարչական մակարդակի համակարգերը կառավարիչներին տրամադրում են ամբողջական ֆինանսական պատկերը և թույլ են տալիս կառավարելու ֆինանսական ռեսուրսները: Գիտելիքների քաղանքները տրամադրում են մի շարք անալիտիկ գործիքներ, որոնք կիրառվեն ներդրումներից մարմինայ շահույթ ստանալու համար: Գործառնական մակարդակի ֆինանսական համակարգերը ենթևաւմ են դրամական միջոցների հոսքներին ֆինանսական գործարքների /չնկերի, վճարումների, արժնթղթերի ենտ կատարվող գործարքների/ մոնիթորինգի միջոցով:

Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգեր

Աշխատանքային ռեսուրսների ենտ աշխատանքը իրենից ներկայացնում է ընկերության գործունեության համար անհրաժեշտ աշխատութիւններգրագումը և կազմակերպումը: Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերը օժտված են այնպիսի հնարավորություններով, ինչպիսիք են պրոտենցիալ աշխատակիցների իդենտիֆիկացիան, գործող աշխատակիցների հաշվառման գրանցումների պահպանումը և աշխատակիցների որակակրուման բարձրացման ծրագրերի ստեղծում: Այսուակ 2.7-ում ներկայացված են կառդային հաշվառման ոլորտի որոշ համակարգերի նկարագիրը:

Այլուստ 2.7

Կառդային հաշվառման ոլորտի համակարգեր:

Համակարգը	Նկարագրությունը	Կազմակերպչական մակարդակը
Ուղացում և գարգացում	Աշխատակիցների ուսուցում, գիտելիքների մակարդակի և ընդունակությունների ստուգում	Գործառնական
Կարիերայի կազմակերպում	Նախագծել աշխատակիցների կարիերայի ուղիները	Գիտելիքների
Փոխհատուցման վերլուծություն	Աշխատակիցների աշխատավարձների ժամային դրույթների և սպարզնատրումների մոնիթորինգ	Կառավարչական
Մարդկային ռեսուրսների պահանագործում	Աշխատուժի պահանջի հնարանկարային պահանագործում	Ռազմակարական

Ուսումնավորական մակարդակով աշխատող համակարգերը բնորոշում են այն պահանջները, որոնք պետք է ներկայացվեն աշխատակիցներին: Այդպիսի պահանջներից են ընդունակությունները, կրթությունը, փորձը, աշխատավարձը: Դա ապագայում իր տեսքում է գտնում ծնննարկության հետանկարային բիզնես պրաներում: Կառավարչական մակարդակի այդ համակարգերը օգնում են կառավարիչներին իրականացնել մոնիթորինգ և վերլուծություն՝ աշխատուժ վարձելու, տեղաբաշխման և վճարման դրույթների բնորոշման նպատակով: Այստեղ գիտելիքների բազաների միջոցով վերլուծվում են պաշտոնական պարտականությունները, աշխատակիցների կարիքայի բարձրացման ուժիները, նրանց վիճապերաւատումը: Գործառնական մակարդակի համակարգերի սահմաններում են գտնվում աշխատողները: Վարձակալման և ընթացիկ տեղաբաշխման խնդիրները:

2.3 Ֆունկցիաների և բիզնես-պրոցեսների ինտեգրացիա. Կորպորատիվ համակարգեր և միջկորպորատիվ գանցեր

Ջնննարկությունների արդյունավետ գործունեության համար մեծ օգտակարություն կարող է ներկայացնել տնտեկատվական համակարգերի միավորումը մի քանի ծնննարկությունների միջև կամ նույնիսկ ամբողջ ցյուղի մակարդակով:

Բիզնես -պրոցեսներ և տնտեկատվական համակարգեր

Վերը նկարագրված տնտեկատվական համակարգերը օգնում են առաջին գլուում վերլուծված բիզնես-պրոցեսների կազմակերպմանը և իրականացմանը: Բիզնես-պրոցեսները կապված են ծնննարկության աշխատանքների կազմակերպման ծեների և կոռրդինացման համակարգի հետ և ուղղված են առավելագույն արժեքավոր արտադրանքի ստացմանը կամ ծառայության մատուցմանը: Մի կողմից, բիզնես-պրոցեսները, դրանք կոնկրետ տեխնոլոգիական արտցեսներ են, որոնք կիրառում են հումք, նյութեր և ընկերության տնտեկատվական ակտիվները: Այլ տեսանկյունից, դրանք միջոցներ են, որոնց օգնությամբ կազմակերպությունը կոռրդինացնում է իր աշխատանքը, տնտեկատվական հոսքներ են, ինչպես նաև կառավարման մեթոդներ: Աղյուսակ 2.8-ում ներկայացված են այս կամ այն ֆունկցիոնալ ոլորտին բնորոշ որոշ տիպային բիզնես -պրոցեսներ:

Աղյուսակ 2.8


Բիզնես-պլոյցների օրինակներ

Տակառի ուժը	Բիզնես-պլոյցն
Արտադրություն	<ul style="list-style-type: none"> Ապրանքի արտադրություն Որակի ստուգում Օգտագործվող նյութերի ցանկի կազմում
Իրազում և մարկետինգ	<ul style="list-style-type: none"> Սպառողների իդենտիֆիկացիա Ապրանքների վնրաբերյալ տնդեկատվության տարածում սպառողների շրջանում Ապրանքների վաճառք
Հաշվապահություն և ֆինանսներ	<ul style="list-style-type: none"> Վճարումներ կրնդիտորներին Ֆինանսական հաշվառվությունների ստեղծում Կանխիկ միջոցների հաշվառման կառավարում
Կաղը ին հաշվառում	<ul style="list-style-type: none"> Աշխատակիցների ընդունում Աշխատակիցների արտադրողականության գնահատում Աշխատակիցների ներգրավումը վճարման պյաններում

Զնայած, որ յուրաքանչյուր ֆունկցիոնալ ոլորտ օժտված է բիզնես-պլոյցների իր հավաքածուով, գոյություն ունեն այսպես կոչված բիզնես-պլոյցներ, որոնք ընդհանուր են տարբեր ֆունկցիաների համար՝ հատնելով այս կամ այն ոլորտների սահմանները, և կիրառվում են իրացման, մարկետինգի, արտադրության և հաշվապահության համակարգերում։ Այդպիսի պլոյցները որոշ չտվով հակառակ են ստանդարտ կազմակերպարական կառավագածքին՝ իրենց մեջ միավորներով կոնկրետ աշխատանք կատարելու նպատակով տարբեր մասնագիտության աշխատակիցներ։ Օրինակ, պատվերի կատարման պրոցեսը պահանջում է հաշվապահության, իրացման, արտադրական և տրանսպորտային բաժինների միասնական աշխատանք։ Նկար 2.4 -ում ներկայացված է, թե ինչպես է աշխատում այդ “Կրոս-ֆաւնկցիոնալ” պլոյցնը։ Տեղեկատվական համակարգերը կարող են սպասարկել այսպիսի բիզնես-պլոյցները, այնպես ինչպես առվարական պլոյցները։

Տեղեկատվական համակարգերը կարող են նպաստել բիզնես-պլոյցների արդյունավետության բարձարացմանը դրանց վնրանայման և ռաջիոնայիզացիայի միջոցով։ Սակայն բիզնես-պլոյցնի վնրակառուցմը բավականին պատասխանառու ծրագիր է։ Ոչ ճիշտ կամ ոչ լրիվ բիզնես-մոդելի կիրառումը կարող է հանգեցնել անցանկալի և հակառակ արդյունքների։ Այսունդ առաջնային է համարվում ոչ թե պլոյցնի

մոդելնիզացիայի միջոցը, այլ այն պրոցեսների ճիշտ ընտրությունը, որոնք պնդում է ձևակիրականություն:



Նկար 2.4 Պատվերի կատարման “կրոս-ֆունկցիոնալ” բիզնես-պրոցեսը

Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարում և մատակարարումների շղթայի կառավարում

Էնեկտրոնային առևտուրը, գլոբալիզացիան, թվային ֆիրմաների ստեղծումն ու զարգացումը ընկերությունների ղեկավարությանը հանգնշրին հաճախորդների հետ փոխհարաբերությունների և մատակարարումների շղթայի կառավարման կազմակերպման վերահիմաստավորմանը: Ներկայումս սպասողները ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար օգտվում են Ինտերնետից: Ներկա պայմաններում մրցակցությանը դիմանալու համար ընկերությունները պնդում են փնտրեն նոր ճանապարհներ առաջարկի որակը բարձրացնելու և ինքնարժենքը իջնցնելու համար: Շատերը գտնում են, որ այս խնդրի լուծումը ընկած է հաճախորդների հետ աշխատելու բիզնես-պրոցեսների բարեկավման և իրացման կամ մատակարարման արդյունավետ համակարգներ ստեղծելու մեջ:

Հաճախարդների հետ հարաբերությունների կառավարում. Այն բանի փոխարեն, որ հաճախորդները դիտվում են որպես նկամտի պարզ աղբյուր,

Ժամանակակից բիզնեսմենները նախընտրում են նրանց դիտնի որպես հետանկարային ննդրությունների օբյեկտ, որի համար և կիրառվում է “Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարում” համակարգը: Այն ուղղված է ընկերության և հաճախորդների միջև փոխհարաբերությունների բալոր ուղղությունների կառավարմանը: Այս համակարգը հանդիսանում է միաժամանակ գործնական և տեղինքական դիսցիլին: Այստեղ տեղեկատվական համակարգները կիրառվում են բոլոր այն բիզնես-պրոցեսների կոռորդինացիայի համար, որոնք կառված են առևտուի, մարկետինգի և սպասարկման ոլորտներում ֆիրմայի և հաճախորդների փոխհարաբերությունների հետ: Իդեալական համակարգը ենթադրում է ֆիրմայի և հաճախորդների գործնական հարաբերությունների բալոր կողմերի ամբողջական հսկողությունը – պատվերի ընդունումից մինչև պատրաստի արտադրանքի բնակումը:

Առաջ բալոր բիզնես-պրոցեսները ծնանարկություններում մենք մյուսից առանձին էին դիտվում և չին օգտվում սպառողների վնրաբերյալ տվյալներից: Հնարավոր էր պատվիրատուի վնրաբերյալ որոշ տեղեկատվության պահպանում անհատական հաշվառման գրանցումների տեսքով, որոշ այլ տվյալներ կարող էին պահպանվել իրացման բաժնում: Այդ տեղեկատվությունը միշտօնական և այսպես կոչված հաճախորդի “Կերպար” ստեղծելու որևէ ենարակօրություն չկար:

Այն գործիքները, որոնք կառավարում են հաճախորդի և ֆիրմայի փոխհարաբերությունները, թույլ են տալիս այս խնդիրը լուծել բիզնես - պրոցեսների ինտենգրացիայի միջոցով և տարբեր կոմունիկացիոն հնարավորություններով /հնարավությունների համար էլեկտրոնային փոստ, հաշվառման ցանցներ, Ինտերնետ/ տեղեկատվության կոնցենտրացիայի օգնությամբ: Նկար 2.5 - ում ներկայացված է նմանառողիք մի կառաւցվածք:

Այս տիպի հաջող կառավագած համակարգները պարունակում են պատվիրատունների վնրաբերյալ տվյալներ բազմաթիվ աղյուրներից և ննդրկայացնում են եղոր անայիտիկ գործիքներ, որոնք թույլ են տալիս պատասխանել այնպիսի հարցների, ինչպիսիք են՝ Ընկերության համար ի՞նչ արժեք է ներկայացնում այս կամ այն պատվիրատուն, Ո՞վ է համարվում մշտական հաճախորդ և որ հաճախորդին սպառագ վաճառները գործառնական ծախսնը միջինը վեց տանգամ գնրազանցում են մշտական հաճախորդի համար նույն ծախսներին/, Ո՞ր հաճախորդներն են համարվում ծննդառություններ /սպառաբար ֆիրմայի մկամուտների 80-90%-ը ծնապիրվում է հաճախորդների 10-20%-ի հաշվին/, Ինչպիսի՞ աղյուրներ և ծառայություններ են ծնոր բնրվում առավել խոշոր հաճախորդների կողմից: Այսպիսի հարցերի պատասխանները կօգնեն նոր հաճախորդներ ծնոր բնրելուն, սպասարկման որակի բարելավելուն, հաճախորդների ցանկությունների ճշգրիտ բնորոշմանը, ինչպես նաև շահագնտ հաճախորդների պահպանմանը:

Իրացում

- Հնագիտական
- Ինտերնետով
- Առաքիչների միջոցով
- Մանրածախ առևտուր

Մարքեթինգ

- Գովազդային
տվյալներ
- Տվյալների
վնրայություն

Կաճախարդների սպասարկում

- Սպասարկման կենտրոնի տվյալներ
- Web տվյալներ
- Առաքիչների ծառայության տվյալներ


- Միասնական
տնօսակենտ
հաճախարդների
նկատմամբ
- Հաղորդագրաւ-
թյուններ
պատվրատուններին
- Պատվերի
կտուտրման
ամբողջական
հակողություն
- Հնաանկարային
հարաբերություններ
հաճախարդների ենթ
- Լավագույն
հաճախարդների
իդենտիֆիկացիա

Նկար 2.5 Հաճախարդների հետ հարաբերությունների կառավարումը

Մատակարարումների շղթայի կառավարում. Որպեսզի պատվիրատուին ապրանքը հասցի առավելագույնս արագ և նվազագույն ծախսներով, ֆիրմաները ծգուում են օպտիմալացնել այն բիզնես-պրոցեսները, որոնք վերաբերվում են մատակարարմանը և առարմանը: Մատակարարումների շղթայի կառավարումը սնրութեն կապված է հումքի ձեռք բերման, արտադրության և պատրաստի արտադրանքի առարման հետ: Այսունդ ններգրավված են մատակարարի, առարիշի և պատվիրատուի լոգիստիկի համակարգերը, որոնք մասնակցում են մեկ միացյալ պրոցեսի մեջ, իսկ վերջինս Ենթադրում է ժամանակ, աշխատանք և գումար: Մատակարարումների շղթան տեխնոլոգիական ցանց է, որն իր մեջ պարունակում է հումքի մատակարարումը, մշակումը և պատրաստի արտադրանքի առարումը պատվիրատուին: Այս ցանցում մասնակցում են արտադրող գործարանները, մնացած բազաները, տրանսպորտային միջոցները, մանրածախ առևտուրները, պատասխանառու աշխա-

տողները և վերը նշված բոլոր էլեմենտներին վերաբերող տեղեկատվական ռեստրուսները: Ապրանքները և ծառայությունները պրոցեսի սկզբում իրենցից “հումք” են ներկայացնում, որոնք, անցնելով արտադրության և լոգիստիկայի որոշակի համակարգներով, սպասարկներին են հասնում որպես պատրաստի արտադրանք: Այս ամբողջ շղթայի արդյունավետ գործունության նպատակով անհրաժեշտ է հեռացնել ավելացրդ փակերը, բացառի ուղացումները: Այսպիսի շղթայի օրինակ կարող է համդիսանալ Hewlett-Packard ընկերության ստեղծած մատակարակման շղթան, համաձայն որի պատվիրատուն օռ-լին պատվիրատում է համակարգիչի համապատասխան կոնֆիգուրացիան, որը նրան է հասնում 48 ժամվա ընթացքում: Այդ շղթայի համար հումք են հանդիսանում համակարգիչի համապատասխան հանգույցները, որոնք հավաքման /արտադրական/ պրոցեսից հետո առարկվում են: Այս համակարգը օգտակար ենակ այն բանում, որ պատրաստի համակարգիչները այլևս չեն ենթարկվում բարյական մաշվածքի խանությունների վաճառասների վրա և դրանով իսկ հսկայական վնասների հասցնում: Նկար 2.6-ում ներկայացված է մատակարարման շղթայի կառավարման սխեման:

Տարրություններ, պահուատի մակարդակ, մատակարարման գրաֆիկ,
վճարումների ժամկետ



Պատվիրներ, վերադարձման հարցումներ, վերանորոգման և սպասարկման
հարցումներ, վճարումներ

Նկար 2.6 Մատակարարման շղթայի կառավարման սխեման

Տնկեկատվական համակարգների դերը այս շղթայի կառավարման գործում բավական մնել է: Դրանք թույլ են տալիս կառավարել մատակարարությունների շղթան դրա բաղկացուցիչ պրոցեսների կողրդինացիայի և հսկողության միջոցով: Այս համակարգները կառավարման պրոցեսը առավել արդյունավետ են դարձնում հետևյալ գործորությունների արդյունքում.

- Օգնություն այն որոշումների ընդունման գործում, թե նրա և ինչ արտադրնել, ինչքան պահենստավորնել և տնդաշարժել,
- Պատվիրների առաջ փոխանցում,
- Պատվիրների կառարման արտցնի հետևում,

- Պահուստների մակարդակի կառավարում,
- Առաքումների վերահսկում,
- Արտադրության պահապետում շուկայի իրական պահանջներին համապատասխան,
- Ապրանքի դիզայնի արագ փոփոխություն,
- Ապրանքի սպեցիֆիկացիայի առահեօքում,
- Վերադարձված ապրանքների և խտանի վերաբերյալ տնտեսառության տարածում:


Մատուկարարման շղթաների կառավարման համակարգերը, հատուկ ծրագրային ապահովման միջոցով, կարող են ստեղծվել ինչպն ննրքին, այնպն էլ արտաքին համակարգչային ցանցների հիման վրա:

Ձեռնարկությունների / Կորպորատիվ / տնտեսառության համակարգեր

Մնե կազմակերպությունները որպես կանոն աշխատում են տարբեր տնտեսակի տնտեսառության համակարգերով, որոնք կատարում են բազմապիսի ֆունկցիաներ և գործում են տարբեր կազմակերպարական մակարդակներում՝ սպասարկելով բիզնես-պրոցեսների համախմբությունները: Ավանդական պատկերացմամբ այդ համակարգերի մնե մասը ոչ մի ծևով կապված չէ մնելով մյուսի հետ: Այդ պատճառով կառավարիչների համար դժվար է հավաքնել ծեռնարկության վիճակը ամբողջովին ներկայացնող բալոր տվյալները: Օրինակ, առաքման ծառայության աշխատակիցները չեն կարող պատվենի ծևակերպման ժամանակ միանգամից առնել, թե գոյություն ունի՞ արդյոք, այդ ապրանքը պահենառում, հաճախորդները գրկված են պատվենի կատարման գործընթացին հետևելու հնարավորությունից, իսկ արտադրական բաժինը չի կարող համածայնեցնել իր գործունեությունը ֆինանսանական բաժնի հետ: Տնտեսառության հոսքի մասնառումը հարյուրավոր առանձին համակարգերի և տվյալների բազաների կարող է բացասաբար անդրադառնալ ընկերության աշխատանքի արդյունավետության վրա:

Հաճախորդների հետ փոխարաքնորությունները և մատակարարումների շղթաների կառավարման համակարգերը թույլ են տալիս լուծենությամբ խնդիրներ: Ներկայումս շատ կազմակերպություններ ներդնում են տնտեսառության կոռպորատիվ համակարգերը, որոնք այլ կերպ կոչվում են կորպորատիվ օնսուրսների պլանավորման համակարգեր: Դրանք ապահովում են ընկերության ներառությունը բալոր գործընթացների ինտենքրացիան: Այդպիսի համակարգերը կարող են մոդելավորել և ավտոմատացնել ծեռնարկության բազմաթիվ բիզնես-պրոցեսներ՝ ներառյալ պատվենիների կատարումը և բնեների փոխադրման ժամանակացույցի կազմումը: Ընդ որում, ամբողջ տնտեսառությունը հասանելի է

Ընկերության աշխատակիցներին և այլևս համակարգերի միջև կապի թանկարժեք միջոցների կարիք չի լինում: Առանձին բիզնես-պլանները, որոնք կապված են իրազման, առաքման, արտադրության, ֆինանսների և լոգիստիկայի հետ, կարող են ինտենզիվ մի քանի ընդհանուր գործնարացների մեջ, որոնք գործում են միանգամից բոլոր ֆայնկցիանալ ոլորտներում և բոլոր կազմակերպական մակարդակներում: Նկար 2.7-ում ներկայացված է թե ինչպես են աշխատում այդպիսի համակարգերը:



Նկար 2.7 Արդյունաբենրական տեղեկատվական համակարգներ

Կորպօրատիկ ռնաւրսների պլանավորման համակարգը տվյալներ է ստանում բոլոր հիմնական քիզնս-տրոցնեներից տվյալների բազայի ձևով՝ պահպանների դրանք արխիվում, որտեղ նրանք կարող են օգտագործվել այլ ոլորտներում։ Կառավարչիները կարիք ունեն հուսափի և ոչ ժամանակավորներ տեղակությունների, որպեսզի օրվա ընթացքում կառողինացնեն բոլոր գործառնությունները և տեղյակ լինեն ճնշնարկության գործների վիճակին։

Նկարագրենք մի իրավիճակ: Եթե Բյուստն լում ընկերության առևտրային ներկայացուցիչը ծևակնրաբում է պատվիրը և տվյալները ափառման հաղորդվում են բայց հետաքրքրված աշխատակիցներին: Գործարանը հանկ-կրնգում նույնպես ստանում է այդ պատվիրը և մեկսում է պարագա-

Որությունը: Պահեստում վերականգնում է արտադրության պրոցեսը՝ ապրանքի առաջման ամսաթվերը ճշտելու նպատակով: Ընդ որում՝ ենարակոր է պահեստում ստուգել անհրաժեշտ կոմպլիտավորող արտադրատևականների առկայությունը և պակասող միավորների պատվիրումը: Ռենտրսների պահանափորման համակարգը պահպանում է պատվերի վերաբերյալ ողջ տեղենկատվությունը՝ ենարակորություն ստեղծելով դրա կատարման արոցներ հսկել քայլ առ քայլ: Նոր տվյալները ավտոմատ հաղորդվում են հաշվառահմայքուն: Համակարգը համապատասխան ծառայություններին հաղորդում է տեղենկատվություն, որն անհրաժեշտ է առևտրային միջնորդավճարի հաշվարկի նպատակով: Համակարգը նորացնում է ընկերության հաշվառային հաշվառությունը, դեբիտորական պարտքը, վճարումների գումարը և կանխիկ գումարի չափը: Լոնդոնում գտնվող կենտրոնական զրասենյակը պարբերաբար իրացման, արտադրության, ընթացիկ պատվերների և ընկերության գործունեության այլ կողմերի մասին տեղենկատվություն է ստանում: Ներկայացնենք այն բիզնես-պրոցեսները, որոնց նպատակը են կորպորատիվ համակարգերը:

- **Արտադրական պրոցեսներ,** որոնք պարունակում են պաշարների կառավարում, ձեռք բերում, մատուակարարումներ, արտադրության պահանգորում, նյութերի պահանջի պահանգորում, ձեռնարկության սարքավորումների պահպանում:
- **Հաշվառահմական և ֆինանսական պրոցեսներ,** որոնք ներառում են դեբիտորների և կրեդիտորների հաշվառումը, առկա միջոցների և կանխառությունների կառավարումը, “ապրանքներ/ծախսներ” հաշվառումը, զիսավոր գիրքը և ֆինանսական հաշվառությունները:
- **Իրացման և մարկետինգի պրոցեսներ,** որոնք են պատվերների մշակումը, գնազոյացումը, մատուակարարումները, հաշիվ-ֆակտորաների դրուս գորումը և իրացման պլանավորումը և կառավարումը:
- **Աշխատանքային ռեսուրսների կառավարման պրոցեսներ,** որոնք ներառում են անձնակազմի ղեկավարումը, աշխատաժամանակի հաշվառումը, աշխատավարձի կառավարումը, աշխատակազմի պլանափորումը և մշակումը, նկամուտների հաշվապահությունը, գործուղումների հաշվառությունները:

Զերոնարկությունների կորպորատիվ/ տեղենկատվական համակարգերի առավելություններն ու թերությունները

Կորպորատիվ տեղենկատվական համակարգերը միավորում են բոլոր իմանական բիզնես-պրոցեսները մնկ ծրագրային հավելվածի մնջ: Այստեղ հնարակոր են նաև որոշ բարդություններ:

Կորպորատիվ տնդեկատվական համակարգերի ռասավելությանները
Կորպորատիվ տնդեկատվական համակարգերի կիրառումը թույլ է տալիս հասնել լուրջ բարելավումների բիզնեսի չորս հիմնական շափումներում-ֆիրմայի կառուցվածքում, կառավարման պրօցեսում, տնխնողական պլատֆորմում և աշխատանքի արդյունաբենության մեջ:

Ֆիրմայի կառուցվածքը. Ընկերությունները կորպորատիվ տնդեկատվական համակարգերը կարող են օգտագործել գործող կազմակերպական կառուցվածքների պահպանման կամ նոր, ավելի արդյունավետ կառուցվածքի ստեղծման համար: Օրինակ, դրանք կարող են օգտագործել տնդեկատվական համակարգերը կազմակերպության բոլոր բիզնես-արդյունաների ինտեգրացիայի համար՝ անկախ մասնաշյուղների աշխարհագրական տնդեքաշխատման և դրանց կողմից իրականացվող ֆունկցիաներից: Ըստ որում, տնդեկատվական տնդեկատվության վիճակական ինչնական արդյունների և մեթոդների ունիթիկացիա: Տարբեր բաժինների աշխատակիցները միառնեն կամ ինդիրները կլուծեն համանման ճանապարհներով և կտիրեն նոյն տնդեկատվությանը, եթե նոյնիսկ նրանք գտնվում են տարբեր կիսագններում:

Կառավարում, բիզնես-պրոցեսների կառավարումը գիտելիքների բազաների օգնությամբ. Ի լրումն բազմաթիվ կարևոր գործողությունների ավտոմացման, ինչպիսիք են պատովեների ընդունումը, մատուկարարությունը և աշխատավարձի հաշվարկը, տնդեկատվական համակարգերը կարող են էապես բարձրացնել կառավարիչների աշխատանքի որակը և հեշտացնել որոշումների ընդունման գործընթացը, հատկապես ոչ ստանդարտ իրավիճակներում: Բոլոր բիզնես-պրոցեսներին վերաբերվող տնդեկատվությունը պահպանվում է համակարգում և հասանելի է ցանկացած ժամանակ, օրինակ, համակարգը կարող է օգնել որպեսու, թե որ արտադրանքներն են քերում առավելագույն և նվազագույն շահույթ: Տնդեկատվական համակարգերի ներդրման շնորհիվ կառավարիչները ստիպված չեն լինում ընդունել կարևոր որոշումներ ոչ լրիվ տվյալների հիման վրա /որոնք ստացված են միայն սնվական բաժնից/:

Տեխնոլոգիա, միասնական պատրիում. Արդյունաբերական տնդեկատվական համակարգերը ներառում են մեկ միասնական ունիթիկազգած տեխնոլոգիական պլատֆորմ և համատնելի սարքավորումների կիրառում: Բոլոր հիմնական բիզնես-պրոցեսներից ստացվող տվյալները պահպանվում են միասնական արխիվում, ձեռնարկությունում ընդունված ընդեհանուր ստանդարտ ֆորմատներով:

Բիզնես արդյունավետ գործառնություններ, հաճախորդի կողմից հսկվող բիզնես -պրոցեսներ. Արդյունաբերական տնդեկատվական համակարգերը կարող են այնպիսի կառուցվածքի հիմք ծառայել, որում հաշվի են առնվում պատմիրառուների բոլոր ցանկությունները և շուկայի տեխնիկաները: Ծնորհիվ առանձին բիզնես-պրոցեսների ինտեղրացիայի, ինչպիսիք են իրացումը, արտադրությունը, ֆինանսները և լոգիստիկան,

կազմակերպությունը կարող է արդյունավետ արձագանքն իւաճախորդների բռնը հարցումներին, պղանափորն նոր արտադրանքների թողարկումը և ստեղծել էժան և արդյունավետ առաքման շղթաներ: Հնարավորություն է առաջանաւ արտադրել միայն այն ապրանքը, որը պահանջարկ ունի, ընդ որում, պնտքական քանակություններով և առանց պահեստներում եռամբի և կոմալենկատակարգների երկարաժամկետ պահպանման: Ապրանքների գնների և օրակի վնրաբերյալ տվյալների մշակման համար օգտագործելով տեղենկատվական համակարգները, ընկերությունները կարող են բարձրացնել իրենց արտադրանքների և ծառայությունների պահանջարկը:

Հօրագորատիկ տեղենկատվական համակարգների ենտ աշխատանքի խնդիրները և բարդությունները. Ծայած տեղենկատվական համակարգները կարող են բարելավել ամբողջ կազմակերպության գործունեության կողոքինացիան, բարձրացնել դրա աշխատանքի արդյունավետությունը և օգնել կարևոր որաշումների ընդունմանը, դրանց նախազգումը և ներդրումը հաճախ բավական բարդ գործ է հանդիսանում: Դրանք պահանջում են ոչ միայն նշանակալի ներդրումներ նոր տեխնոլոգիաներում, այլ նաև բիզնես-պրոցեսների մնացած առանձին բնրում են արմատական փոփոխությունների: Ընկերությունները ստիպված են վնրանայն բիզնեսի մնացած առանձին առանձին տեղենկատվության ազատ տարածումը: Աշխատակիցները պետք է հարմարվեն նոր պարտականությունների կատարմանը և պատասխանատվության նոր մակարդակներին: Ընդ որում, նրանցից պահաջում է նոր, բարդ ծրագրերի յուրացում, որը պահանջում է ժամանակի և աշխատանքի լրացուցիչ ծախսումներ: Այսպիսով, նոր տեղենկատվական համակարգների կիրառումը ծնննարկությունների առջև դնում է բարդ խնդիրներ - երկարատև և թանկարժեք ներդրման պրոցես, ավանդական բիզնես-պրոցեսների մեջ փոփոխությունների իրականացում և կառավարման նոր մեթոդների առավելությունների և թերությունների վնրությունների անցկացում:

Ներդրման բարդությունները. Կորպորատիկ մետրաների պլանավորման համակարգների ներդրումը ցանկացած ընկերության գործունեության մեջ բնրում է լուրջ փոփոխությունների: Խոսք գնում է ոչ միայն տեխնիկական նորամուծությունների, այլ նաև բոլոր հիմնական պրոցեսների նկատմամբ նոր մոտենացման մասին: Բացի դրանից, ընկերության կազմակերպական կառուցվածքը նույնական անփոփոխ չի մնում: Ֆիրմաները, որոնք ներդնում են այդպիսի համակարգներ, պետք է պատրաստ լինեն տվյալների ստանդարտիզացիայի, հազարավոր աշխատակիցների ուսուցմանը և վնրապատրաստմանը, հիմնական բիզնես-պրոցեսների վնրակառուցմանը, ընդ որում այդ ամենը պետք է

իրականացվի ընթացիկ աշխատանքին գուգահեն: Խոշոր ընկերություննում նոր համակարգի ներդրման պրոցեսը կարող է տևել 3-5 տարի: Այն կազմակերպությունները, որոնք ունեն ոչ հստակ պատկերացումներ սպասվող աշխատանքային և նյութական ծախսումների մասին, կարող են հայտնի դժվարությունների առաջ, այդ համակարգների ներդրման ժամանակ կամ սխալներ թույլ տալ դրա ստեղծման և հաստատման ընթացքում, որը իր հերթին, թույլ չի տա հասնել զանկալի արդյունքների:

Բարձր նախնական ծախսերը և հետագա շաեր. Արդյունաբերական տնտեսվական համակարգների ներդրման արժեքը բարձր է, սակայն այն հաշվարկվում է նախօրոք: Միշտ չէ, որ ապագա ծախսների գնահատականները ճշգրիտ են լինում: Ընդ որում, այդ համակարգների օգտագործման ապագա առավելությունները ոչ միշտ են հստակ, հատկանիս դրանց ստեղծման պրոցեսի սկզբում, քանի որ առավելությունները միանգամից չեն բացահայտվում, քանի դեռ համակարգները ամբողջ մաշտաբով չեն սկսել աշխատել, աշխատակիցները չեն վերտառադրաստիլ և ստացած գիտելիքները դեռ չեն սովորել գործնականում կիրառել:


Ճկունության բացակայություն. Տնտեսվական համակարգների ծրագրային առանձին կանոն, բավականին բարդ է և դրանց հետ աշխատել սովորելը ենշտ չէ, հատկապես որակափորկած մասնագետների պակասի դնարքում, որոնք կարող են ինստալացնել, հարմարեցնել և սպասարկել համակարգը: Քանի որ այդ ծրագրային հավելվածները խիստ կապված են կօրպորատիվ բիզնես-պրոցեսների հետ, ծրագրային առահեռված մեջ նույնիսկ փոքր փոփոխությունների դնարքում հաճախ հարկ է լինում վերափոխել ամբողջ համակարգը և ինտենզիվ միայն մակարդակի պատճառով երբեմն առհենար է լինում փոփոխել միայն համակարգի առանձին պրոցեսներ սպասարկող էնիմնտները: Նոր սերնդի տնտեսվական համակարգները ունեն բավականին կոշտ կառուցվածք՝ ի տարրենքություն եների, որոնք կարելի էր փոփոխել քայլ ճաշակի, այդ պատճառով նախնական վերլուծությանն ու հաշվարկներին անհրաժեշտ է հատկացնել մեծ ուշադրություն:

Ուգմաժարական պոտենցիալի բացահայտումը. Հնարավոր է, որ ընկերությունները չկարողանան իրականացնել դրված ռազմավարական նպատակները այն դնարքում, եթե բիզնես-պրոցեսների ինտենզիվան, ընդհանրացված մեթոդների կիրառումով, հնարավորություն չտա ստեղծել բիզնեսի վարման նոր օրգինալ մեթոդիկաներ, որոնք թույլ կտան ստանալ առավելություններ մրցակիցների նկատմամբ: Եթե տնտեսվական համակարգը ընկերության բիզնեսի վարման հիմնական սկզբունքների հետ համատեղելի չլինի, ապա դրա ներդրումից դժվար թե ստացվի պլանավորված շաեր: Զննենարկության տնտեսվական համակարգները

Ենթադրում են բաժինների և ծառայությունների կենտրոնացում, որպէս պատասխանառու են օրոշումների ընդունման համար, որը օրոշ ֆիրմաների համար կարող է հարմար չլինել: Այս տառամով գոյություն ունեն ընկերություններ, որոնք տնտեսատվական համակարգների բարձր մակարդակի հնտեղացիայի կարիք չունեն:

Հնդկայնված կորպորացիաներ և արդյունաբերական ցանցեր

Արդյունաբերության որոշ ճյուղներում ընկերությունները ընդայնում են իրենց տնտեսատվական համակարգները սնվական ֆիրմաների սահմաններից դուրս՝ ճյուղի այլ ձեռնարկությունների հետ տնտեսատվական փոխանակման նպատակով: Արդյունաբերական ցանցները, որոնք երբեմն առվանում են ընդլայնված կորպորացիաներ, միմյանց միջև կապում են ընկերությունների տնտեսատվական համակարգները ամբողջ ճյուղի մասշտաբով (Նկար 2.8):



Նկար 2.8 Արդյունաբերական համակարգչային ցանցեր

Օրինակ, Procter&Gamble /P&G/ ընկերությունը, որը հանդիսանում է լայն սպառման ապրանքների խոշորագույն ընկերություններից մեկը, մշակել է մի համակարգ, որը կողրդինացնում է մանրածախ առևտութիւն, մեծածախ արահետների, սեփական արտադրական ձեռնարկությունների, տրանսպորտային ծառայությունների և հումքի մատակարարների տնտեսատվական համակարգների աշխատանքը: Այս համակարգը օգնում է ընկերությանը իրականացնել սնվական բիզնեսի անընդհատ մոնիթորինգ՝ սկսած հումքի մատակարարումներից մինչև վերջնական արտադրություն:

րանքի վաճառքը: Ընկերությունը բնանավոխսադրումների կառավարման և ապրանքների դեֆիցիտի կանխման նպատակով իր աշխատանքում օգտագործում է խանութներից ստացված տվյալներ: Մատուկարարների հետ էնկուրունային կապը հնարավորություն է տալիս ընկերությանը պատմիրներ հումքի նոր խմբանակներ այն ժամանակ, երբ գործարաններում այն վերջանալու վրա է: Համակարգչային համակարգը համապատասխան վերլուծությունների միջոցով օգնեց ֆիրմային կրճատներ պահանջներում պահպանվող արտադրանքի քանակը: Procter&Gamble ընկերությունը մշակել է մի սեփական համակարգ /Ultimate Supply System/, որը կիրառում է ինտերնետ-տեխնոլոգիաները մանրածախ վաճառքների և մատուկարարների համակարգերը իր սեփական կորպորատիվ լոկալ ցանցի հետ կապնու համար: Դրա շնորհիվ նրկու անգամ կրճատվեց պատրաստի արտադրանքի պահպանման ժամանակը՝ դրանով իսկ էականորեն կրճատնով պահենատային ծախսներ միջոցներ խնայվեց:

Գոյություն ունեն արդյունաբերական համակարգչային ցանցների նրկու տարատեսակ - ուղղահայաց արդյունաբերական ցանցերը, որոնք միավորում են ֆիրմայի գործառնությունները և մատուկարարների հետ աշխատանքը և կարող են օգտագործել մատուկարարման համակարգների կառավարման համար, իորիզոնական արդյունաբերական ցանցերը, որոնք ճյուղի սահմաններում իրար հետ կապում են տարբեր ֆիրմաներ, ներառյալ մրցակիցներին: Որպես օրինակ կարող է հանդիսանալ OASIS-ը, որը կիրառվում է նույնընտր, միավորում է կոմունալ ձեռնարկությունները՝ էնկուրուներգիայի ավելցուկները վաճառնությունը նպատակով: Որոշ արդյունաբերական ցանցներ կորդինացնում են մրցակիցների գործողությունները, որոնք ունեն ընդհանուր շահ: Դրանք նպատակ ունեն խստ կրճատներ մատուկարար ֆիրմաների թիվը, որը ենարտակություն կտա բարձրացնել մնացածների աշխատանքի արդյունավետությունը և այդպիսակ այդ համագործակցությունները կլինեն փոխահավետ: Այսուակ 2.9-ում ներկայացված են օրինակներ նրկու տեսակի արդյունաբերական ցանցներից: Ներկայումս ցանցների մեծամասնությունը ուղղահայաց են և չեն միավորում արդյունաբերության մեջ ճյուղում աշխատող մրցակիցներին:

Նույն արդյունաբերական ցանցնը այսօր մտսնագիտանում են ձեռնակությունների մատուկարարման համակարգներին աջակցություն ցույց տալու համար: Ռեսուրսների արանափորման համակարգերը հիմնականում ուղղված են արդյունաբերության ներքին պրոցեսների կազմակերպման, ֆինանսական հաշվառման և անձնակազմի հետ աշխատանքներին նպաստելուն և նախնականորեն այս համակարգերում դրված չեն մատուկարարների և հաճախարդների հետ կապների գործառնությունները, սակայն ծրագրային ապահովություն ստեղծող ընկերությունները կտարանեագործում են իրենց արտադրանքը, որպեսզի իրենց հաճախարդները կարողանան օգտագործել նաև էնկուրունային կտակի տռավելություն-

Ները հումքի մատակարարների և սպառղների հնտ կատ պահպաննլու համար:

Աղյուսակ 2.9.

Արդյունաբերական ցանցների օրինակներ

Կազմակերպությունը	Արյունաբերական ցանցի տիպը	Նկարագրությունը
Coca-Cola	Ուղղահայաց	Կորպորատիվ համակարգի ներդրման ժամանակ օգտագործվող է SAP համակարգը, նախատեսվել է համակարգի ընդլայնումը ընդհուպ մինչև տարբեր խմբներ շահագույն գործընկերները:
OASIS	Հորիզոնական	Միավորում է էնկտրուէնրգիա արտադրող ընկերությունները, որը թույլ է տալիս կոռորդիացնել էնկտրուէնրգիայի բաշխումը:
General Mills, Kellogg, O'Lakes, Monsanto	Հորիզոնական	Ինտերնետի միջոցով փաթենթավորման մատակարարների հնտ միավորված ցանց, որի արդյունքնում կրծատվում են հումքի վրա կատարվող ծախսները:
Safeway UK	Ուղղահայաց	Էնկտրոնային կապը տարբեր մատակարարների հնտ, որոնք ընդհանուր ձևով տարբեր տիպի առևտրային տնտեսատվություն են օգտագործում:

Տնտեսատվական կորպորատիվ համակարգները իրենց մնջ կարող են միավորներ նաև բոլոր ներքին պրոցեսները, որոնք կապված են ընկերության մատակարարման համակարգի հնտ, ինչպիսիք են առարումը, գույքագրումը և արտադրությունը, որը պարզեցնում է ֆիրմայի գործողությունների կոռորդիացիան գործընկերների և պատվիրատունների հնտ: Արտադրական քածինը կարող է ստանալ հստակ տնտեսատվություն այն մասին, թե ի՞նչ և և ի՞նչ քանակությամբ նա պետք է արտադրի, տվյալները հիմնվում են պատվերների ծավալի վրա, որը հնարավորություն է տալիս կրծատնել պահենտավորված պատրաստի արտադրանքի ծավալը: Եթե մատակարարման շղթայի բոլոր մասնակիցները օգտագործում են նույնատիպ համատենդիի/ տնտեսատվական համակարգներ, ապա կարող են իրականացվել տվյալների փոխանակում լրիվ ավտոմատ ռեժիմում: Ընկերությունները, արյունաբերական ցանցների ստեղծման համար, կարող են օգտվել նաև հնտերնետ-տեխնոլոգիաներից, քանի որ դա տնտեսատվության ազատ փոխանակման համար թույլ է տալիս ստեղծել ընդհանուր բազա շուկայի մասնակիցների միջև:

ԳԼՈՒԽ 3

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս գլուխում ներկայացված է՝


- Կազմակերպությունների կարևորագույն բնութագրերի բնօրոշումը,
- Տնղեկատվական համակարգերի և կազմակերպությունների փոխհարաբերության վերլուծությունը,
- Կառավարչական գործունեության և դերերի դասական և ժամանակակից մոդելների տարրերությունները,
- Կազմակերպություններում կառավարիչների որոշումներ ընդունելու պրոցեսը,
- Տնղեկատվական համակարգերի դերի գնահատումը քիզնես-ռազմավարությունների տարրեր մակարդակներում:

Այստեղ կինտագուտվեն կազմակերպությունների, կառավարման, տնղեկատվական համակարգերի, ինչպես նաև քիզնես-ռազմավարությունների փոխհարաբերությունները: Կընրվի կազմակերպությունների բնութագրերի նկարագրությունը, որնոց ընկալումը անհրաժեշտ է տնղեկատվական համակարգերի ննդրյաման համար: Բացի դրանից, հնտագուտվամ է նաև կառավարիչի դերը որոշումների ընդունման արոցներում: Հատկապես ուշադրությունը դարձվում է այն ոլորտների վրա, որտեղ տնղակատվական համակարգերի կիրառումը թայլ կտա բարձրացնել կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև դիտարկվում են մրցակցության հետ կապված խնդիրները:

3.1 Կազմակերպություններ և տնղեկատվական համակարգեր

Կազմակերպությունները և տնղեկատվական համակարգերը միմյանց հետ գունդում են անընդհատ փոխազդեցության մեջ: Մի կրղմից, տնղեկատվական համակարգերը պնտք է համաձայննեցված լինեն կազմակերպությունների հետ այն տառամով, որ կազմակերպության ննդրում շահագրգռված խմբերին մատուկարարեն կարևոր տնղեկատվություն: Մյուս կրղմից, կազմակերպությունը պնտք է տնդյակ լինի տնղեկատվական համակարգից և բաց լինի այդ համակարգերի համար, որպեսզի նոր տեխնոլոգիաների կիրառումը օգտակար լինի այդ կազմակերպության համար: Տնղեկատվական տեխնոլոգիաների և կազմակերպությունների փոխհարաբերությունը բավականին բարդ է և հաճախ ննդրական բազմաթիվ գործուների ազդեցությանը, ինչպիսիք են

Կազմակերպության կառուցվածքը, ստանդարտ օպերատիվ գործնքացները, բաղադրականությունը, կուլտուրան, միջավայրը և կառավարչական որոշումները /Նկար 3.1/:



Նկար 3.1 Կազմակերպությունների և տնտեսատվական տնհանուղղանների խաչածն կապը

Կառավարիչները պնտը է նաև և առաջ նկատի ունենան, որ հնարավոր չեն որևէ ձևնարկությունում ներդնել տնտեսատվական համակարգ առանց կազմակերպության էռությունը ուսումնասիրներու և ընկալներու:


Կազմակերպության բնորոշումը

Կազմակերպությունը /Փիրման/ կայուն, ճևական, սոցիալական կառուցվածք է, որը ռենուրսներ է ստանում միջավայրից, մշակում դրանք՝ ստեղծելով ներքային արդյունք: Այս տեխնիկական բնորոշման մեջ շեշտը դրվում է կազմակերպության համար բնութագրական նրեր էլեմենտների վրա: Միջավայրի կողմից տրամադրվող հիմնական արտադրական գործուներն են հանդիսանում կապիտալը և աշխատությունը: Կազմակերպությունը արտադրական ֆունկցիաների միջոցով ծնափոխում է այս մուտքերը, դրանք վերածելով արտադրանքի: Արտադրանքը և ծառայությունները, իրենց հերթին, սպառվում են միջավայրում, հնտագայում վերածվելով մուտքի էլեմենտների /Նկար 3.2/:

Կազմակերպությունը նրկարատևության և պահպանողականության առումով հանդիսանում է առավել կայուն միավոր, քան ոչ ճևական խումբը /օրինակ, ընկերախումբը/: Այն իրենից ներկայացնում է ճևական

իրավաբանական միավոր, որի համար մշակված են առկա օրենսդրությանը ներփակվող ներքին կանոններ և գործնթացներ: Կազմակերպությունները նաև առջևական կառուցվածքներ են, քանի որ իրենցից ներկայացնում են առջևական էլեմենտների հավաքածու:

Կազմակերպություն




Նկար 3.2 Կազմակերպության տնինիկական մակրոէկոնոմիկական բնորոշումը

Կազմակերպության այսպիսի սահմանումը պարզ է և ամբողջական, սակայն այն չի կարելի համարել բավական նկարագրական և կանխատնական, եթե խոսքը զնում է իրական աշխարհի մասին: Այս առումով կազմակերպությունը պատճեն իրական ձևով կարելի է սահմանել վարքագծային սահմանում/ որպես իրավունքների և պարտականությունների հավաքածու, որոնք հաշվնելով են ժամանակի ընթացքում, եթե տեղի են ունենում կոնֆլիկտներ և կոնֆլիկտների լուծումներ հնար 3.3:/

Կազմակերպության աշխատակիցները մշակում են աշխատանքի մնացածները, աշխատանքների իրականացման կարգը և աշխատանքային պայմաններ՝ համաձայն այն մեջ, որ աշխատակիցները ստորադասների և դեկանատների են: Սակայն նշենք, որ այսպիսի պայմանավորվածությունների մեջ մասը չեն կարող ծնականացվել:

Ինչպես են կազմակերպության վերը ներկայացված սահմանումները հարաբերվում տնինության տնինությունների են: Կազմակերպությունում տնինության վավերական գործությունների իրականացման /տնինկատվական համակարգների ներդրման/ պրոցեսում տնինիկական մուտքումը ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, որ մուտքային եռումքը ձևադրությունը է ներդրման արտադրանքի: Սակայն առավել իրական, վարքագծային մուտքում դնարաւ նոր տնինկատվական համակարգի ստեղծումը կամ ենի ձևադրություններ: Որոշ տնինկատվական համակարգներ կազմակերպության ներառմ վավերական տնինիկական առավել քանի որ տնինիկական ձևադրություններ: Որոշ տնինկատվական համակարգներ կազմակերպության ներառմ վավերական տնինիկական առավել քանի որ տնինիկական ձևադրություններ:

Նույթունների, պարտավորությունների, ինչպես նաև կարծիքների հաշվեկշիռ:



Նկար 3.3 Կազմակերպության վարքագծային ներկայացումը

Կազմակերպության տեխնիկական և վարքագծային բնորոշումները մենքը մյուսին չեն հակառակ, ավելին, դրանք միմյանց լրացնում են: Ենթակա տեխնիկական բնորոշումներ, կարենի է հնտևություններ կատարել, թե ինչպես են հազարափոր մրցակից ֆիրմաները ինտեգրացնում կապիտալը, աշխատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Կազմակերպության վարքագծային մոդելը քոյլ է տալիս “խորանալ” առանձին ֆիրմայի մեջ և բնորոշեն, թե ինչպես ազդեցություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները ֆիրմայի ներսում աշխատանքի կազմակերպման վրա: Այս հարցերին կանդրադարնաք 3.2-ում:

Տարբեր կազմակերպությունների ընդհանրությունները

Առաջին հայացքից Apple Computers, United Airlines, Ընկերությունները և Ասպեն քաղաքի ոստիկանական վարչությունը ոչ մի ընդհանուր բան չունեն, սակայն դա այդպես չէ: Որոշ տեսանկյունից բոլոր ժամանակակից կազմակերպությունները նման են, քանի որ դրանք ունեն որոշակի ընդհանուր բնութագրենք՝

- Աշխատանքի հստակ բաժանում,
- Հիմքարիխա,
- Որոշակի կանոններ և պրոցեդուրաներ,

- Օբյեկտիվ տրամաբանություն,
- Որոշակի պաշտոնների համար անհրաժեշտ տեխնիկական որակավորումներ,
- Կազմակերպության մարսիմալ արդյունավետություն:

Այս բնութագրները առաջին անգամ նկարագրվել են 1911 թ. գնր-մանական տցիուղք Մարս Վեբերի կողմից: Նա բոլոր կազմակերպությունները անվանել է բարուկրատիաններ, որոնց ունեն որոշակի կառաւցվածքային առանձնահատկություններ:

Համաձային Վեբերի, ժամանակակից բարուկրատիանները եիմնված են աշխատանքի հստակ բաժանման վրա և մասնագետների տնտեսաշխատությունը ենթակայության կանոններին՝ իրենից ներկայացնելով հինրաժիշտական կառուցվածք, որտեղ յուրաքանչյուրը եաշվառու է ինչ-որ մնկին և նրա իրավաւորյունները սահմանափակված են: Գործունեությունը կազմակերպության ննրասում ենթարկվում է որոշակի կանոնների: Այս կանոնները ստեղծում են օրոշումների ընդունման օբյեկտիվ ունիվերսալ համակարգ: Կազմակերպությունը վարձում է աշխատակիցներին՝ հենավելով նրանց տեխնիկական որակավորման և պրաֆինինալիզմի վրա և յուրաքանչյուր կազմակերպության նպատակն է ապահովել առավելագույն ենարագոր արդյունավետություն:

Մի քանի այլ գիտնականներ Վեբերի տնտելության վրա ավելացրեցին որոշակի լրացուցիչ յուրահատկություններ: Եվ այսպէս, հիմնվելով դպսական տնտելության վրա, բոլոր կազմակերպությունները ստեղծում են սնիգական ստանդարտ գործառնական պրոցեդուրաններ, քաղաքականություն և կուլտուրա:

Ստանդարտ գործառնական պրոցեդուրաններ. Բավականաշատի նրկարատու գործող կազմակերպությունները դատնում են բավականաշատի արդյունավետ՝ ստանդարտ գործառնությունների միջոցով արտադրելով սահմանափակ քանակությամբ ապրանքներ և մատուցելով սահմանափակ ծավակի ծառայություններ: Այդպիսի գործառնությունները ժամանակի ընթացքում դառնում են հստակ կանոնների, գործընթացների և մեթոդների հիմք, որոնք կոչվում են ստանդարտ գործառնական պրոցեդուրաններ: Դրանք մշակվում են բոլոր կանխատեսնելի իրավիճակների համար:

Գործողությունների այսպիսի ստանդարտ կարգը ժամանակակից կազմակերպությունների արդյունավետության կարևորագույն բաղկացուցիչն է: Ստանդարտ գործառնական պրոցեդուրանների օրինակ է եանդիսանում հագարակոր այն գործողությունների համախմբությունը, որի արդյունքում հոսքագծի վրա հավաքվում է ավտոմեքենան: Կազմակերպության համար բավականին բարդ է փոփոխություններ մտցնել ստանդարտ պրոցեդուրանների մեջ: Եթենու, նույնիսկ կազմակերպությունը այդպիսի փոփոխություններ մտցնելու նպատակով ստիպված է լինում ընդհատուն արտադրական պրոցենք:

Ստանդարտ գործառնական պրոցեսուրաննը մողեռիզացիայի բարդությունը այն պատճառննից մնին է հանդիսանում, համաձայն որի Դնտրոյտի ավտոմոբիլային գործարանները չեն կարողացնել ննդրող մասսայական արտադրության ճապարնական տեխնոլոգիանները: Դրանով ամերիկյան ընկերությունները ավտոմօբիլային շուկայում բավականին զիջնեցին իրենց դիրքերը: Երկար տարիներ ամերիկյան ավտոմոբիլաշխնարարները արտադրաւթյան մեջ կիրառում էին Հնըրի Ֆորդի կողմից ստեղծված մնթողը, որի իմաստը կայանում էր նրանում, որ ավտոմոբիլ արտադրելու ամենաէժան և հստանելի միջոցն է ավտոմօբիլը արտադրել պարզագոյն գործադրությանների միջոցով, որոնք անընդհատ կրկնվում են բանվորների կողմից: Ճառանական մնթողի էլությունն այն է, որ կրճատվում են բանվորների թիվը, քանի որ յուրաքանչյուր բանվոր պատուիսանառու է ոչ թե մեկ պարզագոյն, այլ մի քանի արտադրական գործադրությունների համար: Համաձայն այս մնթողի, կատարվում է միջոցների բավական խնայում և աշխատանքի որակի բարձրացում: Բանվորները, որոնք պատուախանառու են մի քանի արտադրական պրոցեսուրանների համար, կարող են կանգնեցնել արտադրության պրոցեսը, եթե դա աներաժշտ է նկատված սխալը կամ խոտանը ուղղելու համար:

Կազմակերպարկան բաղադրականություն. Կազմակերպության աշխատակիցներ տարբեր պաշտոններ են գրանցնում, տիրապետում են տարբեր մասնագիտությունների, ունեն տարբեր պատասխանատվություններ և պատասխանառու են գործունության տարբեր ոլորտների համար: Մրա արդյունքում յուրաքանչյուր աշխատակից ունի իր տեսանկյունը, թե ինչպես պնտը է բաշխվն կազմակերպության ռեսուրսները, ով պնտը է ստանա պարզեցնուրում կամ տուգանքը: Այս տարբերությունները գոյաւթյուն ունեն կազմակերպության բոլոր մակարդակներում և դրանք բազմաթիվ կոնֆլիկտների աղթյուր են հանդիսանում: “Քաղաքական” դիմակայությունը հիմնական բարդություններից մնին է հանդիսանում կազմակերպարկան փոփոխությունների իրականացման ժամանակ, հատկապես, նրա խոսքը գնում է նոր տեխնոլոգիաների ներդրման մասին: Գործնականորեն բոլոր տնօնկատվական համակարգները, որոնց ննդրությունը բնրում է զգայի փոփոխությունների, հառկապես կադրային ոլորտում, դիմադրության են հանդիպում են կազմակերպության աշխատակիցների շրջանում:

Կազմակերպարկան կուլտուրա. Բոլոր կազմակերպությունները իրենց նպատակներին հասնելու համար նենում են սնվական, հիմնարար և անվիճնի ննթադրություններից: Կազմակերպարկան կուլտուրան իրենից ննդրայացնում է այդ մնթադրությունների հավաքածուն, որը տնօնկատվություն է պարունակում այն մասին թե ի՞նչ, ինչպես և թ՞քք և ո՞ւ մ համար կազմակերպությունը պնտը է արտադրի: Որպես օրենք, այս

“Կանոնակարգը” նախատեսված է կազմակերպության ներքին օգտագործման համար: Կազմակերպաշական կոլտուրան միավորող ուժ է, որը կարող է եիմք ծառայեն բազմապահի “քաղաքական” կոնֆլիկտների լուծման նպատակով: Այն թույլ է տալիս գտնել միացյալ մոտենցումներ գործընթացների մեջամասնության համար՝ կազմակերպության անդամներին օգնելով ըմբռնելու ձևնարկության գործունեության իմաստը: Այլ խոսքներով առած, եթե մենք բոլորն ենում ենք նույն ննթադրություններից, առա ավելի հեշտ կիխնի ցանկացած հարցում համաձայնության գալը:

Միաժամանակ կազմակերպաշական կոլտուրան խանգարիչ հանգամանք կարող է հանդիսանալ ձևնարկության գործունեության կառուցվածքի փոփոխության համար, հստկապն, եթե խոսքը գնաւում է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման մասին: Ցանկացած տեխնիկական նորմայի կազմակերպաշական կոլտուրայի առումով կարող է դիմադրության հանդիպն, քանի որ ոչ մի կազմակերպություն չի ցանկանա փոխներ հիմնարար սկզբունքները: Սակայն լինում են դնարքներ, եթե նոր տեխնոլոգիաների ներդրումը ուղղակիորեն անհրաժեշտ է և ստեղծված պրոլեմային իրավիճակից դուրս գալու միակ նլքն է հանդիսանում:

Կազմակերպությունների տարրերից ցուցանիշները

Զայած այն բանին, որ բոլոր կազմակերպությունները ունեն ընդհանուր բնութագրներ, անենար է գտնել նրկու միանման կազմակերպություններ: Կազմակերպությունները կարող են ունենալ տարբեր կառուցվածքներ, նպատակներ, հաճախարդներ, դնկավարման մեթոդներ, խնդիրներ և միջավայրներ:

Տարրեր կազմակերպաշական տիպեր. Կազմակերպության հիմնական տարրերից ցուցանիշն է հանդիսանում դրա կառուցվածքը կամ ձևը: Կազմակերպաշական կառուցվածքները կարենի դասակարգնել տարբեր ձևերով: Այլուսակ 3.1.-ում ներկայացնենք Մինցբերգի դասակարգումը, որտեղ առանձնացված են կազմակերպաշական հինգ կառուցվածքներ:

Կազմակերպությունները և դրանց միջավայրը. Կազմակերպությունները չեն կարող գոյաւունել անկախ իրենց միջավայրերից, որտեղից դրանք սնվելու են, այսինքն ստանում են աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսները և որտեղ մատակակարում են իրենց արտադրանքը: Կազմակերպությունները և դրանց միջավայրերը փոխառաջացված են միմյանց ենտ: Մի կողմից, կազմակերպությունները բաց են միջավայրի ֆիզիկական և սոցիալական ազդեցությունների համար և կախված են դրանցից: Առանց ֆինանսական և մարդկային ռեսուրսների կազմակերպությունները չեն կարող գոյաւունել: Կազմակերպությունները պետք է ննթադրկվեն օրենսդրությանը,

Կառավարության որոշումներին և հաճախորդների գործողություններին որպաշտի հարմարվելու ունակություն ցուցաբերեն:

Աղյուսակ 3.1

Կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքները

Կազմակերպական կառուցվածքը	Նկարագրությունը	Օրինակ
Ձևնարկչատիրական կառուցվածք	Երիտասարդ, ոչ մեծ ձեռնարկություն արագ փոփոխվող միջավայրում: Ունի պարզ կառուցվածք և կառավարվում է ձեռնարկատիրոջ կողմից, որը և իրականացնում է դեկավարության բոլոր ֆունկցիաները:	Փոքր, վնրջնրս բացված ֆիրմա
Մեքենայական բյուրոկրատիա	Մեծ “բյուրոկրատիա” դանդաղ փոփոխվող միջավայրում, արտադրում է ստանդարտ արտադրանք, կառավարվում է կառավարիչների կենտրոնացված թիմով, որոնք և պատասխանատու են որոշումների ընդունման համար:	Միջին չափի արտադրական ձեռնարկություն
Դիմիգիոն բյուրոկրատիա	Մի քանի մեքենայական բյուրոկրատիաների համակցություն, որոնցից յուրաքանչյուրը արտադրում է առանձին արտադրանք կամ տրամադրում է առանձին ծառայություն՝ միավորված կենտրոնացված դեկավարությամբ:	Խոշորագույն ընկերություն ներ, ինչպես օրինակ, General Motors
Պրոֆեսիոնալ բյուրոկրատիա	Կազմակերպություն, որը հիմնված է գիտնիքների կիրառման վրա և որտեղ արտադրանքը կամ ծառայությունները ստեղծվում են փորձագետների և պրոֆեսիոնալների հսկողության տակ: Սովորաբար դրանք դեկավարվում են առանձին բաժինների դեկավարների կողմից, իսկ կենտրոնացված դեկավարությունը գրադրվում է միայն ընդհանուր հարցերով:	Իրավաբանական ֆիրմաներ, դպրոցներ, հիվանդանոցներ
Աղյուսակատիա	“Նպատակային նշանակություն” ունցող կազմակերպություն, որը արագ պատասխանում է միջավայրի փոփոխվող պայմաններին: Բաղկացած է մասնագետների մեծ խմբերից, որոնք ժամանակավորապես ընդգրկված են բազմապրոֆիլ կողմանիցներում: Կառավարման կենտրոնացման աստիճանը շատ ցածր է	Կոնսալտինգային ընկերություններ, օրինակ, Rand Corporation

Մյուս կողմից, կազմակերպությունները իրենք կարող են ազդել միջավայրի վրա: Օրինակ, կազմակերպությունները միմյանց միջև կարող են միավորումներ կազմել՝ նրկում քաղաքական իրավիճակի և սպառ-

դական տրամադրությունների վրա ազդելու, ինչպես նաև գովազդային գործունեության նպատակով:

Նկար 3.4-ում ներկայացված է տնտեկատվական համակարգերի դերը, կազմակերպությունների կողմից միջավայրի ազդեցությունները ընկալելու գործում, և ցույց է տրված թե ինչպես են այդ համակարգերը օգնում ազդելու միջավայրի վրա:

Կազմակերպությունները և դրանց միջավայրը


Ոնտուրմները և միջավայրի
ստեմանտվագումները

Կառավարության օրգաններ

Մրցակիցներ
Պատվիրատուններ
Ֆինանսական
կազմակերպություններ

Կուլտուրա

Գիտնլիրներ



Նկար 3.4 Կազմակերպության և միջավայրի հարաբերությունը

Տնտեկատվական համակարգերը անփոխարինելի գործիքներ են արտաքին միջավայրի հնտագործության համար, որոնք դնկառականներին օգնում են նկատել այն արտաքին փոփոխությունները, որոնց նկատմամբ կազմակերպությունը պետք է իրականացնի պատասխան գործողություններ:

Օրպես օրենք, միջավայրը ավելի արագ է փոփոխվում, քան ինքը՝ կազմակերպությունը: Այս երևույթի եխմնական պատճառն է հանդիսանաւում այն, որ կազմակերպությունը չի կարողանում արագ հարմարվել միջավայրին և ունաւուների առկասին /սա հատկապես վնասաբեր է երիտասարդ կազմակերպություններին/, որոնք անհրաժեշտ են մրցակցությանը դիմանալու համար: Նոր տեխնոլոգիաների և ապահովագույն հայտնվելը, հասարակության ճաշակի, հասարակական արժեքների փոփոխությունները իրենց որոշակի ազդեցությունները պետք է ունենան և որոշակի սահմանափակումներ դնեն կազմակերպության կուլտուրայի և քաղաքականացության վրա: Ըստ կազմակերպություններ ի վիճակի չեն հարմարվելու արտաքին միջավայրի փոփոխություններին: Իներցիան հատուկ է ստանդարտ գործառնական գործողություններին: Նորամուծությունների հետ կապված կոնֆլիկտները խանգարում են հարմարվելու

պրոցեսներին: Այլ պատճառվ զարմանալի է, որ ԱՄՆ-ում 1919թ. գործող 500 խոշոր ընկերություններից միայն 10%-ն է, որ մինչև եհմագոյացուն ունի:

Այլ տարբերություններ կազմակերպությունների միջև. Կազմակերպությունները միայնացից կարող են տարբերվել նաև մի շարք այլ պատճառներով: Դրանք տարբերվում են իրենց առջև դրված տարբեր նպատակներով և դրանց հասնելու ուժիներով: Որոշ կազմակերպությունների գործունեությունը հետապնդում է ուժային նպատակներ /օրինակ բանտերը/, այլ կազմակերպությունների նպատակները ուժիլիտար են /գործնական/: Գոյություն ունեն նաև նորմատիվ նպատակներ հետապնդող կազմակերպություններ /համալսարաններ, կրոնական կազմակերպություններ/: Կազմակերպությունները կարող են ծառայել տարբեր խմբերի շահերին:

Իրարից կարող են խիստ տարբերվել նաև կազմակերպությունների դեկավարման համակարգերը, դրանք կարող են լինել դեմոկրատական կամ ավտորիտար:

Աղյուսակ 3.2

Կազմակերպությունների հիմնական հատկությունները

Հարաբեր հատկություններ	Տարբեր հատկություններ
Ձևական կառուցվածք	Կազմակերպության տիպ
Ստանդարտ գործառնական պրոցեդուրաներ	Միջավայր
Զաղարքականություն	Նպատակներ
Կուլտուրա	Հզորություն
	Հաճախորդներ
	Ֆունկցիաներ
	Ղեկավալություն
	Խնդիրներ
	Տվյալնությաներ
	Բիզնես-պրոցեսներ

Բացի նշվածներից, կազմակերպություններին կարող է տարբերակել իրականացվող խնդիրների տիպը և դրանց իրականացման տեխնոլոգիաները: Որոշ կազմակերպություններ իրականացնում են միասնականացվող խնդիրներ, որոնք նշարկվում են ծանկանացված կանոններին և միջամտություններ չեն պահանջում, ինչպես օրինակ, ավտոմոբիլների պահեստամասների արտադրությունը: Այլ տիպի կազմակերպություններ լուծում են ոչ ստանդարտ խնդիրներ:

